**KNYAZYAN**
& PARTNERS

| | |
|---|---|
| ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝ | «Կնյազյան ընդ Փարթնրս» ՓԲԸ |
| ՀԱՍՑԵ՝ | ՀՀ, ք. Երևան, Աբեղյան 6/4 |
| ՊԱՇՏՈՆ՝ | Կրտսեր իրավախորհրդատու / իրավախորհրդատու |
| ԳՐԱՖԻԿ՝ | 9:00-18:00, շաբաթ և կիրակի՝ ազատ |
| ԴԻՄԵԼՈՒ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ՝ | 18.10.2019թ. |

Փաստաբանական գրասենյակը աշխատանքի է հրավիրում մտավոր սեփականության իրավունքի ոլորտում մասնագիտացած կամ մասնագիտանալ ցանկացող իրավաբանի, աշխատանքային փորձը ցանկալի է, բայց՝ ոչ պարտադիր: Աշխատանքը կառաջարկվի հարցազրույցը և պարտադիր եռամսյա փորձաշրջանը հաջողությամբ ավարտած թեկնածուին:

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների, ապրանքային նշանների և անբարեխիղճ մրցակցության ոլորտում ավագ իրավախորհրդատուների հանձնարարությունների կատարում,
- ապրանքային նշանների հայտերի պատրաստում,
- իրավաբանական հետազոտությունների իրականացում,
- իրավաբանական կարծիքների, հայցադիմումների, բողոքների և այլ փաստաթղթերի կազմում,
- տվյալ պաշտոնի հետ կապված այլ պարտականություններ:

## ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

- բարձրագույն իրավաբանական կրթություն,
- մտավոր սեփականության իրավունքի ոլորտի օրենսդրության իմացությունը (ՀՀ, ԵՏՄ և միջազգային օրենսդրություն), ինչպես նաև ՄՍ իրավունքի ոլորտի դատախաղի մասնակցությունը ցանկալի է,
- հայերենի գերազանց (գրավոր և բանավոր) իմացություն,
- անգլերեն և ռուսերեն լեզուների իմացությունն առավելություն է,
- համակարգչային հմտություններ (word, excel), այլ ծրագրերի իմացությունը (power point, outlook և այլն) ցանկալի է,
- հաճախորդների սպասարկման հմտությունը ցանկալի է,
- թիմային աշխատանքի և շփման հմտությունը առավելություն է,
- բարձր մոտիվացիա և նախաձեռնողականություն, հստակ սահմանված ժամկետներում աշխատելու ունակություն,
- լարված աշխատանք կատարելու ունակություն,
- կատարած աշխատանքի հանդեպ բարձր պատասխանատվություն,
- քաղաքավարություն,
- գործընկերներից և առհասարակ սովորելու կարողություն և հմտությունների շարունակական զարգացման պատրաստակամություն:

Ներկայացված պահանջներին համապատասխանող թեկնածուները կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրությունները (CV կամ Resume) էլ-նամակով hripsime@knyazyanlaw.com հասցեին:

ԿԱՐԵՎՈՐ Է: *Էլ-նամակում հարկավոր է պարտադիր նշել, թե ինչու է դիմումատուն ցանկանում մասնագիտանալ ՄՍ իրավունքի ոլորտում և ինչու է ցանկանում աշխատել Knyazyan & Partners փաստաբանական գրասենյակում:*